

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական ՍՍՌ Մեծիստրենի Սովետին կից Պետական Ձեռագրատուն (Մատենադարան), ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱՄՈՒ, 1949 թ., № 2, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1950 թ., 208 էջ:

Պետական ձեռագրատունը լույս է ընծայել «ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱՄՈՒ»-ի երկրորդ համարը, ճոխ բովանդակությամբ:

Ժողովածուում հոդվածներ և ուսումնասիրություններ ունեն Պետական մատենադարանի ձեռագրերի վրա աշխատող մի խումբ գիտաշխատողներ:

Ժողովածուն սկսում է Տ. Ղազանչյանի «ՔԻՄԻԱԿԱՆ ԱՊԱՐԱՏՈՒՐԱՆ ԵՎ ԼԱՐՈՐԱՏՈՐ ՏԵՆՆԻԿԱՆ ԸՍՏ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ» խորագրերը կրող հոդվածով (էջ 3—28): Հեղինակը, ձեռագրատան փաստական հարուստ նյութերի հիման վրա, աշխատում է պարզել՝ թե միջին դարերում Հայաստանի ալքիմիկոսները ի՞նչպիսի լաբորատոր տեխնիկա և ի՞նչ լաբորատոր ապարատներ ունեին: Հեղինակը գտնում է, որ արաբական քիմիայից անկախ, հայերը ևս ունեցել են քիմիա, և ձգտել են ոչ թե թանձրամիտ միտոսականություն, այլ գործնական նպատակներով հոգովածագիրն ապացուցում է, որ «Միջնադարյան Հայաստանում եղել են հարուստ ալքիմիական լաբորատորիաներ և այդ լաբորատորիաները հագեցված են եղել առաջնակարգ քիմիական ապարատայությամբ: Փաստական նյութերի հիման վրա, հեղինակը թվում է հայերին ծանոթ քիմիական գործողությունները և ապարատության, և պարզում քիմիական տեխնոլոգիայի հետ կապված այլ հարցեր:

Ահանախոր ահնաբույժ պրոֆ. Բ. Ն. Մելիք-Մուսլանը, իր «ԱԶՔԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՆԵՐՎԸ ԸՍՏ XII—XV ԴԱՐՆԵՐԻ ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ» խորագրով ուսանրին հոդվածում (էջ 29—36), խոսում է ակնաբուժության մի կարևոր հարցի՝ տեսողական ներվի շուրջ հայ բժշկության ունեցած ըմբռնումների մասին: Ուսումնասիրելով Արուսայիզի, Մխիթար Հերացու և Ամիրդովլաթի տեսակետները, հեղինակը գալիս է այն եզրակացության, որ «Մխիթար Հերացու, Արուսայիզի և Ամիրդովլաթի պատկերացումները ունեն պատմական հետաքրքրություն»:

Ռաբրեա Արայանը, «ԵԱԶՆԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԱԳՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ» ուսումնասիրության մեջ (էջ 37—52), անդրադառնում է հայկական խազերձի գաղափրը պարզելու ուղղությամբ նշված հնետեսային և Կոմիտասի կատա-

րած ջանքերին: Հեղինակն այնուհետև, խաղաղոր ձեռագրերի ուսումնասիրության առարկա դնելով, հայտնաբերված նորությունների հիման վրա աշխատում է ճշտել խազերի կիրառության ժամանակը, մասամբ և պարզաբանել նրանց ծագման ու զարգացման հանգամանքները: Հոդվածագիրը, հենվելով մի շարք ձեռագրերի և պատասխանների վրա, փորձում է հերքել Կիրակոս Գանձակեցու հարևանցի մի հիշատակության վրա քաղաքացիություն ստացած այն կարծիքը, որ իբրեւ խաչատուր Տարոնացին է եղել, որ առաջին անգամ խազերը բերել է Արևելք: Նա հայկական ձեռագրերի խազական սիստեմը համարում է տեղական և սերտ նմանություն է դնում հայկական և վրացական միջնադարյան երաժշտական սիստեմների մեջ:

Խ. Գալֆայանը, իր «ԵԾԵԼԱՏԻՆԱՅԻՆ ԱՄՐԱՅՆՈՂ (ՈՒՍՈՒՑԹՐ) ԵՎ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՅՔԱՅՎԱԾ ՁԵՌԱԳՐՆԵՐԻ ՎԵՐԱՄԵՆԿՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» խորագրերը կրող հոդվածում (էջ 53—64), հենվելով լաբորատորական փորձարկությունների և իր կատարած բազմաթիվ փորձերի վրա, գտնում է, որ «Հնաբաժուր է և անհրաժեշտ ժնյատրինային ամրացնող լուծույթը կիրառել քայքայված, բզկտված ձեռագրերի ու տպագիր գրականության թերթերն ու տեքստերը ամրացնելու և նրանց կյանքը ըստ հնաբաժուրին երկարացնելու համար»:

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը, իր «ԶԵՆՈՆԻ «ՅԱՂԱԿՍ ԲՆՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ» խորագրով հոդվածում (էջ 65—80), ուսումնասիրում է հայագիտության նեղ շրջանում հայտնի, բայց դեռ չհրատարակված հին հայկական տեքստեր (Այդ թարգմանության գոյության մասին առաջին տեղեկությունը հաղորդել է պրոֆ Մելիքսեթ-Քեղզին իր «К истории точных наук в Армении и Грузии» մենագրության մեջ 1930 թվին: Այնուհետև, նրա վրա կանգ է առել պրոֆ. Ա. Արբախյանը 1944 թվին իր «Երևանացու մատենագրությունը» աշխատության մեջ, 26-րդ էջում):

Խաչիկյանը համեմատելով նշված թարգմանության ձեռագիր ընդօրինակությունները, գալիս է այն եզրակացության, որ նրանք ունեն երկու խմբագրություն՝ համառոտ և ընդարձակ:

Հողվածագիրը ընկում է նաև այն հարցը, թե հույն մատենագրության մեջ հայտնի ութը Զենոններից որի՞ աշխատությունը պիտի համարել նշված տեքստը և դալիս այն հավանական հղողականության, որ այդ ստոյիկյան դպրոցի հիմնադիր Զենոնի տեքստն է՝ «...մասսատասեր Զենոնի ո՛վ լինելու հարցի վերջնական պարզաբանումը թողնելով փիլիսոփայության պատմության մասնագետներին,— գրում է նա,— անհավանական չենք համարում, որ հրատարակվող բնագիրը ստոյիկյան դպրոցի հիմնադիր, Մնաղեոսի որդի Զենոնի, հունարենով մեզ հասած «περὶ φυσῆος» աշխատության թարգմանությունն է» (էջ 71)։

Հողվածագիրն այնուհետև համեմատում է նշված տեքստի մեջ գործածված անանձին տերմինների և ուճի հարցերը հին հայկական այլ թարգմանությունների մեջ գործածված տերմինների ու ոճի հետ և ենթադրում, որ «Յաղագս բնութեան» աշխատությունը թարգմանված պետք է լինի թարգմանական դպրոցի երկրորդ շրջանում կատարված թարգմանություններից առնվազն մի բանի տասնամյակ հետո» (էջ 75), այսինքն VII դարում։

Խաչիկյանը իր հողվածի վերջում կանգ է առնում նաև «Յաղագս բնութեան» երկի տեքստի ազդեցության խնդրի վրա միջնադարյան հայ փիլիսոփայական միտքի վրա և գտնում է, որ այդ ալեքսն էլ խոշոր չի եղել, հեղինակի կարծիքով այդ աշխատությունը ուշագրության առարկա է սկսել դառնալ միայն XIII—XIV դարերում, երբ և արտագրվել է։

Ժողովածուի 81—98 էջերում, Խաչիկյանը տա-

լիս է ձեռագրերի համեմատությամբ կազմված նշված երկի համահավաք բնագիրը։

Ան. Մեացականյանը, իր «ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԻՆՉ-ԻՆՉ ԳՈՐԾՈՑ ԿԱՐԱՊԵՏ ՆՊԻՍԿՈՍՈՍԻ» ՊԻՆՍԻ ՄԱՍԻՆ» հողվածում լեռնության է առնում Գալուստ Շիրմազանյանի ցարդ կորած նկատված և իր կողմից Զեռագրատան մեջ հայտնաբերված կոմեդիան, որը պարունակում է տվյալ ժամանակաշրջանի ազգային-կենդեցական անցքերի, ժողովրդական բարբերի, սոցիալական ըմբռումների մասին հետաքրքիր մանրամասնություններ, Պիսսի վերջում տրված են «ծանոթագրություններ», ցցանկ հատուկ անունների և «բառարան»։

Ան. Մեացականյանը իր երկրորդ հողվածում՝ «ԱՆՏԻՊ ԷՋԵՐՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊՈՆՁԻԱՅԻՑ» վերնագրով, բաղելով Զեռագրատան դրադրերից, ապագրել է XVIII—XIX դարերի մի բանի աշուղների անտիպ բանաստեղծությունները։

Հողվածների վերջում տրված են նյութերի համարոտագրությունները ռուսերեն, ինչ որ դյուրացնում է «Ժողովածու»ի շարադրածումը Միութենական և օտար բանասերների կողմից։

Հայկական ՍՍՏ Մատենադարանի ներկա ժողովածուն կարևոր ներդրում է հանդիսանում հայագիտության մեջ. նա նոր և արժեքավոր նյութեր է մատուցում հայոց պատմությամբ և հայ գրականության պատմությամբ զբաղվող մեր մասնագետներին։

